

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի հուլիսի 3-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների ընթացքի մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

**Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների ընթացքի մասին /զեկուցող Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացները կազմակերպվել են՝ ըստ դասընթացների և միջանկյալ քննությունների հաստատված ժամանակացույցերի: Դասընթացներից հինգ օր անհարգելի բացակայություն ունեցող ուսանողները ներկայացվել են նկատողության, իսկ տասը օր բացակայություն ունեցողները՝ խիստ նկատողության հրամանի: Քննաշրջանը կկազմակերպվի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

**Արտահայտվեցին** – Ա. Ե. Համբարձումյանը, Ա. Ա. Ոսկանյանը

Նշվեց, որ պատրաստվել են 2016 թվականի ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքներով բուհն ավարտած 189 շրջանավարտների դիպլոմների հավելվածները:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Ա. Ա. Ոսկանյան